



## ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության  
Կոտայքի մարզպետարանի և  
Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի միջև



17 հոկտեմբերի 2018թ.

### Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ **Պալատ**), ի դեմս Պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյանի, մի կողմից, և

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը (այսուհետ՝ **Մարզպետարան**), ի դեմս մարզպետ՝ Ռոմանոս Պետրոսյանի մյուս կողմից,

*կարևորելով* Հայաստանի Հանրապետության, որպես իրավական և ժողովրդավարական պետության կայացման ու զարգացման, մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու ընդհանուր նպատակները,

*հաշվի առնելով* մարզում հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը նպաստելու, ինչպես նաև մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը,

*նպատակ ունենալով* քաղաքացիների համար ապահովել օրենքով նախատեսված դեպքերում անվճար իրավական օգնություն ստանալու՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի արդյունավետ իրացումը,

*կարևորելով* փաստաբանության հեղինակության բարձրացումը, խթանելով փաստաբանական ինստիտուտի զարգացումը և փաստաբանական գործունեության արդյունավետությունը,

կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետև՝ **Հուշագիր**)՝ հետևյալի մասին.



### Հոդված 1.

1. Հուշագրի նպատակներն են՝
  - 1) նպաստել արդարադատության մատչելիությանը,
  - 2) նպաստել արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացմանը,
  - 3) նպաստել բնակչության իրավագիտակցության բարձրացմանը,
  - 4) զարգացնել փաստաբանական ինստիտուտը:

### Հոդված 2.

1. Համագործակցության շրջանակներում Կողմերն առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով՝
  - 1) կողմերի հավասարություն,
  - 2) մարդու իրավունքների գերակայություն,
  - 3) օրենքի նկատմամբ հարգանք,
  - 4) բարեխղճություն,
  - 5) թափանցիկություն և
  - 6) ազնվություն:

### Հոդված 3.

1. Կողմերը համագործակցում են հետևյալ հիմնական ուղղություններով՝
  - 1) իրազեկման ծրագրերի իրականացում՝ մարզի բնակիչների համար, այդ թվում՝ քննարկումների կազմակերպում,
  - 2) մարզի բնակիչներին անվճար և արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրում:

### Հոդված 4.

1. Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները Հուշագրով սահմանված համագործակցության հիմնական ուղղությունների իրականացմանն ուղղված բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

### Հոդված 5.

1. Կողմերն արձանագրում են, որ Հուշագրով սահմանված համագործակցության հիմնական ուղղություններն իրագործելու համար՝



- 2) Մարզպետարանը Պալատին անհատույց տրամադրում է տարածք (**այսուհետ՝ Տարածք**) Մարզպետարանի շենքում Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Հրազդան քաղաքի նստավայրը տեղակայելու համար: Կողմերի համաձայնությամբ Տարածքից օգտվելու իրավունք ունեն նաև մարզում գործունեություն իրականացնող այն փաստաբանները, ովքեր չունեն փաստաբանական գործունեություն իրականացնելու հիմնական վայր:
- 3) Պալատը պատրաստակամություն է հայտնում իր միջոցներով վերանորոգել իրեն հանձնվող Տարածքը և այն ապահովել հանրային պաշտպանների և փաստաբանների բնականոն գործունեության համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով:

## **2. Կողմերը պատրաստակամություն են հայտնում՝**

- 1) Մարզի ավագ դպրոցներում դասընթացներ կազմակերպել աշակերտներին Մարդու իրավունքների մասին իրազեկելու և փաստաբանի մասնագիտության հիմունքներին ծանոթացնելու նպատակով:
- 2) Հանրային պաշտպանների, ինչպես նաև Տարածքը զբաղեցնող փաստաբանների միջոցով յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր մարզի բնակիչների համար կազմակերպել անվճար իրավաբանական խորհրդատվություն: Անվճար խորհրդատվության օրը որոշվելու է կողմերի փոխադարձ համաձայնությամբ և հայտարարվելու է մարզի բնակիչներին:
- 3) Անվճար իրավաբանական խորհրդատվության և տարածքների տրամադրման հարցերը քննարկել նաև Արուսյան և Եղվարդ քաղաքների համար:

## **Հոդված 6.**

Կողմերն արձանագրում են, որ սույն Հուշագրով չեն խախտվում փաստաբանների անկախությունը, արտոնությունները կամ անձեռնմխելիությունը:

## **Հոդված 7.**

Հուշագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով:



**Հոդված 8.**

Հուշագրում կարող են առանձին փաստաթղթի տեսքով կատարվել փոփոխություններ և (կամ) լրացումներ:

**Հոդված 9.**

Հուշագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Հոդված 10.**

1. Հուշագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, 2018 թվականի հոկտեմբերի 17-ին, հայերեն լեզվով՝ երկու հավասարազոր իրավական ուժ ունեցող օրինակներից:
2. Յուրաքանչյուր կողմին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Հայաստանի Հանրապետության  
Կոտայքի մարզպետ՝  
Ռոմանոս Պեյրոսյան*

*Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
նախագահ՝ Արա Զոհրաբյան*

ստորագրություն

ստորագրություն

Կ.Տ.

Կ.Տ.